ուստի մտեալ ի ներքս Թուչունք լնուին զեկեղեցին ծուտովք եւ այլօք գուեխօք․ զոր յամենայն հարկիւ որբէաք․ եւ ընդ այգն ընդ առաւօտն ի լուսանալն ձայնք Թուչնոցն խափանէր զձայն ժամասելոյն։„

Որպիսի՜ եղկելի դրութեան եւ նուաստութեան մէջ էր ընկել հայ ազգը, երբ հայկական աթոռի մէջ ճրագ էր վառում մի մահմետական, իսկ ամենայն Հայոց կաթուղիկոսի մարմնի միսը աքցանով էին պոկում . . . ։

Այս ընդհանուր տեսութիւնից յետոյ անցնենք գաղթականութեան պատմութեան։

Մենք տեսանք, որ ամբողջ Հայաստանն եւ Ատրպատական գաւառը հեծում էին Օսմանցւոց իշխանութեան ներքոյ, այնպէս որ բնակիչներից շատերը հարստահարութիւնների երեսից սկսեցին ուրիշ աշխարհներ փախչել, իսկ Արցախի եւ Ուտիացւոց աշխարհից, Շամախու եւ Գանձակի կողմերից բազմաթիւ Հայեր գաղթեցին Պարսկաստան։ Այդ գաղթողների մէջ անուանի էին — Սարուխան բէկ եւ իր եղբայր Նազարը՝ Ոսկանապատ գիւղից․ Ջալալ բէկ եւ իր եղբօրորդին՝ Խաչէնի կողմից․ Մելիք Սուջումն՝ Դիզակից․ Մելիք Փաշիկ՝ Քօչիղ գիւղից․ Մելիք Բաբէն՝ Բրետիս գիւղից, Մելիք Հայկազն՝ Խանածախ գիւղից։ Դիզակի գաւառից էլ չորս գիւղ խմբովին գաղթեց։ Դրանք բոլորը գնացին Ասպահան քաղաքը, որտեղ Շահաբբաս բնակեցրեց նրանց։ Այդ եղաւ 1586 թուին։ Երբ Սրապիոն կաթուղիկոս դարձաւ, Մելքիսէթ կաթուղիկոսն իր հետ առնելով մի քանի եպիսկոպոսներ,